





ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ. — ՉԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՆԻ ԳԻՏԱԿԱՆ



ԲԵԻԵՌԱԳԻՐ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ

(Շար. տես. յէջ 363)

ԳԼՈՒԽ Ժ

ՋԱՂԱԼՈՒ

(Arkukini, Urtahini)

Սարգուրի Բէ արձանագրութիւնն, Ջաղալու գիւղի մօտ, գտնուում է հարաւային, կամ աւելի ճիշդ Գեօկ-չայի հարաւարեմտեան ափերում: Ա. իվանովսկի հանեց բաւականին յաշոյ կտտամպած այս վերին

աստիճանի հետաքրքիր արձանագրութիւնից: Բոտ հետազոտութեան պ. իվանովսկու, լճի հարաւային ափերի մի մասն Գօլանը-գտանը գիւղից մինչև Ջաղալու, բաղկացած է հրաբխային բաղադրութիւնից, և միայն Ջաղալուից գետինը ընդունում է դաշտավայրի տեսքը: Այստեղ սկսւում է Մազրայի հովիտը, որ գոյացել է Մազրա գետի հոսանքից, որ բոլրում է Միննեաց լեռներից (Ղարապաղի լեռ): Անկասկած, այստեղ հարաւում և հարաւ-արեւելքում գրանւում էր այն երկիրը Արկուկինի, որի նուաճման մասին խօսւում է Ջաղալուի արձանագրութեան մէջ: Ուշագրութեան ասնելու է այն հանգամանքը, որ այս արձանագրութեան մէջ չէ խօսւում այդ երկրի գլխաւոր բաղադրի մասին, և բուն Արկուկինին էլ մի այլ Urtahini երկրի մասն է երևում, որից

Սարգսուրի ԲԵ զատել է զորան և Այս տեղ մենք առաջին անգամ ենք հանդիպում Urartu երկրի Ուրարտեան անունը, որ մինչև այժմ յայտնի էր միայն Ասորեստանեան արքերաներից: Այնքան է, որ դա չունէր այն ընդարձակ նշանակութիւնը, որ վայելում էր Ասորեստանի արձանագրութիւններում, այսինքն՝ չէր նշանակում ամբողջ Վանեան պետութիւն, այլ նորա իմաստը շատ սահմանափակ էր: Տարաբարդարար այնքան համառօտ ու կցկտուր են Վանի արձանագրութիւնների տուած աշխարհագրական տեղեկութիւնները, որ մենք ոչ միշտ կարող ենք քաղել նոցանից փոքր ի շատէ հաստատուն ակնարկութիւններ: Ո՛րտեղ էր Urtahini երկրի կենդրոնը, որչափ հեռու է ԲՆՉ ուղղութեամբ էր տարածուում դա Գեօկ-չայի հարաւային ափերից — ահա խնդիրներ, որ չափազանց մեծ նշանակութիւն ունին Ուրարտուի պատմութեան համար: Բայց յամենայն դէպս Urtahini երկրի (= Urartu) գտնուիլն Անդրկովկասի սահմաններում, Երասխի հովտում միանգամայն հաստատում է իմ արտայայտած կարծիքս, («Классообразные надписи Ванских Царей», Труды Восточной Коммиссии, Т. I, вып. III. № 240—401), թէ հին աշխարհէս Ուրարտու՝ համապատասխանում է յետին ժամանակների Այրարատեան աշխարհին, և թէ նորա կենդրոնի փոխադրութիւնը հիւսիսից հարաւ, Վան քաղաքը, յետոյ տեղի ունեցաւ՝ քաղաքական և ռազմագիտական նպատակներից: Բայց Ասորեստանի տարեգրերը, որ արձանագրում էին իւրեանց էջերում Ասորեստանեայց թագաւորների պատերազմները Ուրարտուի դէմ՝ զեռ այն ժամանակը, երբ այս պետութիւնը տակաւին Երասխի հովտումն էր գտնուում (Սյամա-նասար Բ.), յետոյ էլ գործ էին ածում հին անունը, կոչելով Վանի (Տուշպա) թագաւորներին ոչ թէ Բիւայնայի թագաւորներ, ինչպէս նոքա ինքն իրանց անուանում էին, այլ Ուրարտուի թագաւորներ: Յուսանք, որ ապագայ գիւտերը մեր առջև աւելի կը պարզեն այն գիւտը, որ կատարում էր Urtahini երկրի՝ Ուրարտուի յետին և հնազոյն

ժամանակներում: Մեր ձեռքի տակ եղած տեղեկութիւններից երևում է, որ Urtahini-ն ազատ երկիր էր այն միջոցին, երբ Սարգսուրի տիրապետելով Գեօկ-չայի հարաւային ափերին, կտրեց միայն նորանից Arkušini գաւառը: Արդ՝ որովհետեւ Երևանի ամբողջ տափարակը արդէն նուաճուած էր, ուստի կարելի է կարծել, թէ Urtahini-ն գտնուում էր լեռնային կողմերում Երևանից դէպ ի արեւելք:

Չաղալու ի արձանագրութիւնը [N. XV]

1. Խալդեոն հս աղօթում էի, հզօր տիրոջ,
2. որ տուաւ Արքուքինի (Արկուկինի) երկիրը,
3. Սարգսուրի ասում է՝ մօտենայով (?)
4. ես նուաճեցի Արքուքինի երկիրը,
5. բաժանեցի երկրից Ուրտահինի
6. Խալդիացւոց մեծաց
7. Սարգսուրի, որդի Արդիշտի
8. արքային հզօրի, արքային մեծի, արքային երկիրների, արքային արքայից,
9. որ բնակուում է քաղաքում Տուշպա:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԳՕԼԱՆԸ-ԳՌԱՆԸ

Վանի թագաւորների Գեօկ-չայում կատարած աշխարհակալութեանց ամենանշանաւոր յիշատակարանը, որպէս և համայն Անդրկովկասում, այն արձանագրութիւնն է, որ փարպրուած է ջրի եզերքի մի ժայռի վրայ, Սևանայ լճի հարաւային ափի մէջտեղում: Այստեղ, ոչ հեռու Թաթարաց Գլանը-Գուանը (Геланы-Курланы և Հայոց Ալաշալու (Алашалу) գիւղերից, դէպ ի լիճը դուրս է ցցուած փոքր լեռնազօտու մի հրուանդան: Ժայռի պատի վերին ճակատին կայ մի ընդարձակ բեռնագիր արձանագրութիւն, բաղկացած 19 տողերից: Արձանագրութիւնը յայտնի էր դեռ 1862 թ. Մեսրոփ արքեպիսկոպոսը ընդօրինակելով զայն,

լոյս էր ընծայել « Համբաւարեր Ռուսիոյ »
հանդիսում 1863* Թուականին: Պրոֆ. Սէյ-
սը, իւր Վէտի արձանագրութիւնների հետա-
զօտութեան մէջ, այսպիսի կարծիք է յայտ-
նում այս արձանագրութեան մասին. *Unfor-
tunately his copy, published in le Nou-
vellist russe, is so hopelessly bad that
hardly a word in it is recognizable.*
Որովհետեւ Աղամխանի և Զաղարուի արձա-
նագրութիւնները պատկանում են Սարգսուրի
Բէն, նա (Սէյսը) ենթադրում է, թէ այս
արձանագրութիւնն էլ Սարգսուրիին է: Վեր-
ջին ժամանակներս շատ փորձեր եղան ընդ-
օրինակելու այս արձանագրութիւնը, որ
զրաւում էր իւր վրայ ուսումնականների ու
գրագրութիւնը իւր բացատրիկ զիրքով կովկա-
սեան այլ յիշատակարանների մէջ, իւր ան-
սովոր ընդարձակութեամբ և երկրի այս 
զաղափարագրի յաճախակի կրկնութեամբ:
Վերջին հանգամանքը յոյս էր տալիս կար-
ծելու, թէ արձանագրութեան մէջ շատ կա-
րեւոր աշխարհագրական տեղեկութիւններ
կան: Բայց 30 տարուայ ընթացքում ան-
հնարին եղաւ ի մօտոյ հետազօտելու արձա-
նագրութիւնը, վասն զի բոլոր ջանքերն ընդ-
օրինակելու զայն՝ ի դուր անցան. նա այն-
քան բարձր է ջրի մակերևութից, որ ան-
կարելի է հասնել նորան առանց երկար գե-
րաններ տնկելու ու նոցա վրայ տախտա-
կամած շինելու, որ գծուարին գործ է Գեօկ-
չայի նման մի տեղում: Պրոֆ. Սէյսը Մոսկ-
վայի Կայսերական Հնագիտական ընկերու-
թեան նամակներում յոյս է տածում, թէ
ռուս գիտութիւնը կը հոգայ այդ մասին և
կ'աշխատէ լուսանկարել տալ յիշեալ արձա-
նագրութիւնը: 1889 թ. դեբեմնացի ուսու-
մնական Վարդեմար Բելիլը շատ աշխատեցաւ
այդ նպատակին հասնելու համար՝ նա, ե-
րբեք ժամ ջրի մէջ կանգնած մինչև գօտին,
հազիւ կարողացաւ օրինակել արձանագրու-
թեան $\frac{1}{10}$ (այսինքն՝ 3 սող 19—ից): Ընդ-
օրինակած մասն, նորա խօսքով, ճիշդ ցու-

ցանում է, որ իբր թէ արձանագրութիւնը
պատկանում է Սարգսուրի երկրորդին, ինչ-
պէս ենթադրում էր Սէյսը: Մի և նոյն ժա-
մանակ նա պնդում էր, թէ արձանագրու-
թեան լուսանկարը կամ էստամպօը ոչինչ
նշանակութիւն չեն կարող ունենալ հրատա-
րակութեան համար և միայն բնագրի ուշա-
գրութեամբ ուսումնասիրելուց կտրելի է վեր-
ծանել այն:

Հասկանալի բան է, որ մեր գիտնական
ճանապարհորդութեան զլիւսւոր նպատակ-
ներից մէկն էլ էր, գոհացուցիչ կերպով
ընդօրինակել Գոլանը — Գոանի արձանա-
գրութիւնը, և այդ գծուար գործը մեծ յա-
ջողութեամբ զլուի բերեց իմ ճանապար-
հորդակից ընկերս Պ. Իվանովսկին. դորա-
նից լաւագոյնը անկարելի է յուսալ: Արձա-
նագրութեան ստորին մասն միայն քայքա-
յուած է, մնացեալն չնայելով 3000 տա-
րուայ հնութեան, բաւարար կերպով պահ-
պանուած է: Վերջապէս մեր ջանքերը պը-
տակիցեան փառօք և մենք կարող ենք հա-
ղորդել մեր ուսումնասիրութեան արդասիրը:
Արձանագրութիւնը պատկանում է ոչ թէ
Սարգսուրի Բէն, այլ Ռուսա Բէն, այն
հռչակաւոր ժամանակակիցն Ասորեստանի
Թագաւոր Սարգօնի (722—705), որ բոլոր
հիւսիսային ազգերի զլուի անցնելով, մա-
հու ու կենաց պատերազմ էր մղում վերջ-
նիս զէմ:

Սարգօնի Թագաւորութեան տարեգրերը լի
են այս ահեղ պատերազմների նկարագրու-
թեամբ, ուր զոցա զիւցազուր ըստ մեծի
մասին կոչւում է ոչ թէ Ռուսա, այլ Ռրսա
(Ռրծա), թէև առաջին անունն էլ պատա-
հում է: Ռուսա առաջինից և առհասարակ
նորա յաջորդներից մինչև Ռուսա ԲՆ (ժա-
մանակակիցն Ասորեստանի թագի (668—626),
որ 100 տարի ուշ ապրեցաւ, մինչև ցայս-
օր գտնուած չէր և ոչ մի արձանագրու-
թիւն: Սէյսը մինչև անգամ կարծում էր,
թէ Ռրարտու քաղաքական գրութիւնը պա-
տերազմի ժամանակ և պարտութիւնից յետոյ
Սարգօնի օրերում, չէր նպաստում մեծ յի-
շատակարաններ կանգնելու, ապա ուրեմն
նոցա որոնելն էլ աւելորդ է: Ռուսա եր-

* Համբաւարեր Ռուսիոյ հանդիսի հրատ. էր
Զ. Մսերեանց:

կորորդը արձանագրութիւններէ մէջ կոչուած է որդի Էրիմենի, իսկ Ռուսա առաջինը մեր արձանագրութեան մէջ — որդի Սարգուրիի։ Այսպէս լուծուած է խղիղին Ասորեստանայց արձանագրութիւններէ Ուրալի յարաբերութեան մասին Սարգուրի Բէ վերաբերութեամբ։ Բնական էր ենթադրել, յենով ժամանակագրական հիմանց վրայ, թէ Ուրուս՝ որդին էր Սարգուրիի։ Բայց միայն այժմ զաւարացուցուած պատմական իրողութիւն է դառնում և վաւեան հարստութեան 5 թաւաւորների վրայ, որոնք հօրից որդի յաջորդաբար թագաւորելով վաւեան, թողել են մեզ բեկտագիր արձանագրութիւններ, մենք պիտի աւելացնենք վեցերորդը, որ ամենաշնանաւոր դերը կատարեց Ասորեստանի պատմութեան մէջ։ Այս արձանագրութիւնից նախ և յառաջ երևում է, որ Ուրուս առաջինը, չնայելով իւր ալկոծ և ողբերգական կերպով վերջացած թագաւորութեան, զոռ պատերազմներ մղելով ասորեստանի դէմ ժամանակ է գտնում շարունակելու անընդատ գործը իւր հօր Սարգուրի Բ՝ Էրիմենի հիւսիսային նահանգում և յատկապէս Գեօկ—չայի օփեւ բուր։ Մենք տեսանք, որ Սարգուրի Բէ իւր աշխարհակալութիւնները կենդանացնում էր բացառապէս Գեօկ—չայի մօտիկ երկիրներում։ Նորա յաջորդ Ռուսա առաջինը, նոյնպէս գործուծ էր այստեղ, և այս թագաւորից մնացած միակ յիշատակարանը վկայում է այն մեծ եռանդի և յաջողութիւնների մասին, որով նա նուաճել է այս հին Ուրարտուն։ Գորա մէջ Ռուսա առաջինը է 23 երկիրների նուաճման մասին, որոնց անունները յիշում են արձանագրութեան մէջ։ Կովկասի ժայռերի վրայ գտնուած արձանագրութիւններից և ոչ մէկի մէջ մենք չենք տեսնում այսքան երկար ցուցակ նուաճեալ աշխարհների։ Գոքա բոլոր յիշատակարաններին ուրոյն տիրապետութեան, յատկապէս այն երկրի ու քաղաքի, որոնց սահմաններում կանգնած էր յիշատակարանը։ Մեր արձանագրութիւնը չունի բնաւ այդ բնաւորութիւնը, այլ յիշատակարան է Ռուսայի համայն գործունէութեան և բոլոր աշխար-

հակալութիւնների Ուրարտունի մէջ և ամփոփում է նորա յաջողութիւնների արդասեքը։ Ահա ինչու արձանագրութեան աշխարհագրական ակնարկները, չնայելով իւրեանց մանրամասնութեան, չէ կարելի ճշգրտութեամբ յատկացնել որոշ վայրերին, կարելի է միայն զուշակել, որ Սևանայ լիճը և յատկապէս նորա հարաւային ափը այն կէտն էր, ուստի նա սկսեց իւր արշաւանքները զէպի ուրիշ կողմեր։ Չենք կարծում, որ լին սահմանակից երկիրները կարողանային երկար զբաղեցնել այս թագաւորին։ Ըստ արձանագրութեանց Սարգուրի Բ, Գեօկ—չայի բոլոր մարզաբնակ տեղերը արդէն նորա իշխանութեան ներքոյ էին, երկիրն Ուրուրիեանի՝ Տուրիհունի քաղաքով հարաւարեւմուտը, Արբուքինի երկիրը հարաւում արդէն նուաճուած էին։ Միթէ այս անձուկ տարածութեան վրայ պիտի որոնենք միւս երկիրները, որ մնում էին նորա յաջորդին տիրապետելու։ Կա անշնարին է միանգամայն և մենք կարծում ենք, որ արձանագրութիւնը բովանդակում է իւր մէջ և այն երկիրների անունները, որոնք հետու են Գեօկ—չայից, թէ և յիշատակում է նաև Գեօկ—չայի մօտիկ գաւառը, որի ուսման ներում զա կանգնած է։ Մեզ թւում է, որ այդ գաւառը կամ երկիրը Արբուքինի է, որի նուաճման մասին աւանդում է Սարգուրի Բէ Զաղալուի արձանագրութեան մէջ։ Սակայն այդ նուաճումն կատարեալ չէր. մենք վերը նկատեցինք, որ Սարգուրի Բէ Զաղալուի արձանագրութեան մէջ խօսում է միայն երկրի նուաճման և նորա անշատման մասին Ուրտահինի երկրից, բայց չէ յիշում զիսաւոր քաղաքի աւման մասին, ինչպէս մենք տեսանք Կովկասեան ժայռերի միւս արձանագրութիւնների մէջ։ Այս իրողութիւնը մեզ արթն է տալիս ենթադրելու, թէ այդ քաղաքը նուաճուած չէր, ուրեմն երկրի վերջնական և կատարեալ նուաճումն պատկանում էր նորա յաջորդին։ Եւ արդարև Գոլանը—Գոանը գիւղի արձանագրութեան մէջ նուաճեալ երկիրների թւում առաջին տեղում յիշում է Արբուքինի։ Նա չէ յիշում ոչ *Kiehsuni* եր-

կերը (Օրգակու), ոչ Ուրուրիեանի (Աղամ-
խան), որոնք, ակնհայտ է, որ նուաճուած
էին առաջ, մէկը Արգիշտիի ժամանակ, միւսն
Սարգուրի, այլ յիշում է միայն Արգիշ-
տի, որի նուաճումն սկսել էր նորա հայրը,
և վերջացել ինքն։ Ուրիշ երկիրներ Գեօկ-
չայի մօտ գտուար էր սպասել ի նկատի առ-
նելով լճի անձուկ ամիսը և նորա ֆիզիքա-
կան պայմանները։ Բայց հաւանական է այն
ենթադրութիւնը, թէ Գուրան-Գուանի արձա-
նագրութիւնը գտնուում է այն իսկ տեղում,
ուր էր կամ Արգուրիի երկրի մայրաքա-
ղաքը և կամ զորա նշանաւոր բերդերից
մէկն։ Տարաբաղաբար մենք չունինք այդ
տեղի Ուրարտեան անունը, որ կորել է։
Արձանագրութեան կէտն և վերջին տողերը
մասամբ ջնջուած են այիքների կոծումից,
որոնք ուզին ալեկոծութեան ժամանակ հաս-
նում են մինչև արձանագրութիւնն։ Բայց
այնտեղ խօսուում է պալատների, տաճար-
ների շինութեան մասին և այդ պատճառաւ
սպասելի է նաև այն տեղի անունը, ուր
գրեա (չնքերը), կառուցուած էին։ Հիմք
ունինք կարծելու, թէ այդ տեղը՝ այնտեղ
Գեօկ-չայի ամրում էր, արձանագրութեան
մօտ։ Ըստ որում զորա մասին վկայում է
բառացի իմաստն արձանագրութեան (այս
պալատը եւ նորոգեցի) և այն հետաքրքիր
անգամանքը, որ զորա մէջ երկիցս յիշում
է Թէիշթա շաստուածն անունը, որ երկրորդ
տեղն է բռնում Ուրարտեան երրորդութեան
մէջ (Խալդի, Թէիշթա, Արգիշտի)։ Թէիշթայի
գաղափարագիրը նման է Ասորեստանի շաս-
տուած Ռամմանի գաղափարագիրին, որ մըթ-
նուրտի, որոտման, կայծակի և առհասա-
րակ ջրային տարերց շաստուածն էր։ Տա-
րակոյս չկայ, որ Թէիշթան և Ռամմանի
բնակութիւնը մէկ է։ Տաճարն, որի շին-
ութեան մասին խօսուում է արձանագրու-
թեան մէջ, ձօնուած էր այս շաստուածին
և դա շատ հասկանալի է. վասն զի Սեա-
նայ մեծ լիճը նորա խոժոռ ժայռերով, հող-
մերով և ալեկոծութեամբ, գեղեցիկ կապու-
տակ կոհակներով, կենդանեաց ճոխութեամբ,
կարող էր համարուիլ իրրե բնակութեան
տեղի ջրային տարերց շաստուածի։ Շատ

կարելի է, որ վայրի ժայռոտ հրաւանդանը
Գուրան-Գուանը գիւղի մօտ բովանդակու-
մ էր իւր մէջ Ուրարտու բերդերից մէկն, որ
հիմնուած կամ նորոգուած էր Ռուսա Բե-
ձեղով։ Նման իւր պապ Արգիշտի տաղինն,
որ իւր քաղաքական կենդանութիւնը հիմնել էր
Արմաւուր. իսկ վերջինս հայրը Մենուան
Դաշաւառունւում (Ղուհունինի-Մենուահինի-
լի), Ռուսա առաջինը երրորդ ամրութիւնը հի-
մնեց Գեօկ-չայում, որ, զուցէ, կոչուում էր
Ռուսահինիլի։ Մենք գիտենք, որ վասն
մօտ կայ բերդի աւերակներ, որ կոչուում
էր Ռուսահինիլի, որ հաւանական է, թէ
պատկանում Ռուսա առաջինին։

Այսպէս Ռուսա առաջինը կենց Գեօկ-չայի
տիրապետութիւնը, որ սկսել էին նորա նախ-
նիքը, Խնդր է, թէ որտեղ պէտք է որո-
նել մնացեալ 22 աշխարհների դիրքը, որոնք
յիշուում են արձանագրութեան մէջ։ Նախ
և յառաջ նկատուել է որ բոլոր 23 երկրները
բաժանուում են երկու զասի, առաջին զասին
վերաբերում են 4 երկիր (Adahuni, Ue-
lida, Kumeruhi, և Arkukini), որոնք մի
հասարակ անուամբ կոչուում են Suinia,
իմէ միայն մեր ընկերացանութիւնը ճիշդ է.
երկրորդ զասին պատկանում են միւս 19
երկրները (Ubimene, Sanatuaini, Te-
riuisaini, Risuaini, Zuaini, Akuaini,
Amanini, Irkaini, Elaini, Erieltuaini,
Aidamaniuni, Guraini, Alzirani,
Piruaini, Melaini, Useduini, Atazaini,
Eriaimini, Azameruini), որոնք հասա-
րակ անուամբ կոչուում են Riduaini.

Եւելի է, որ առաջին երկու նշանների
ընկերացանութիւնը այնքան էլ հաստատուն
չէ, բայց այնու ամենայնիւ հաւանական է
երևում և հնարաւորութիւն է տալիս քանի
մի խորհրդածութիւններ անելու։ Suinia
կոչումն սկզբնական հասարակ անուն է
«լիճ, աւազան», բայց յետոյ կարող էր
յատուկ անուն նշանակել և յատկապէս «լիճ
Գեօկ-չայի»։ Այս կոչումն Suinia միանգա-
մայն ծածկում է Հայոց Սինիք անուամբ,
որ պատկանում էր Հայոց Հին նահանգին.
վերջինս ընդգրկում էր բոլոր Գեօկ-չայի և
այն գաւառները, որոնք գտնուում էին սորա

արեւելեան և հարաւային կողմերում: Որովհետեւ այս *Suinia* նահանգի մասն էր Արքուքիի գաւառը, որ, անկասկած, Գեօկ-չայի հարաւային ափերումն էր, ուստի *Suinia* անունը ոչ թէ միայն ձայնական այլ և աշխարհագրական նշանակութեամբ համապատասխանում է Սինիք անունին, որովհետեւ զոնէ մէկն Գեօկ-չայի գաւառներէց զորան էր պատկանում: Գուցէ միւս գաւառներն էլ նորա մասն էին կազմում, սակայն յիշուած չեն, վասն զի նոցա նուաճումն չէր կատարուած Ռուսա առաջինի ձեռքով: Իսկ ինչ որ վերաբերում է մնացեալ երեք երկիրներին, բնական է կարծել, որ զորա Գեօկ-չայի արեւելեան և հարաւարեւելեան կողմերումն էին Ղարապաղի լեռների և Շահ-տաղի սահմաններից զուրս: Պ. Խովանովսկու վկայութեամբ յիշեալ լեռների ձորերը և ճանապարհները նոցա վրայից անցանելի են և անցքեր են բացում զէպ ի զետեքի հովիտները, որոնք բոլորում են փոքր կովկասի արեւելեան կողմերից, արդի Գանձակի նահանգի սահմաններում: Այս նահանգն հնագիտական տեսակէտից տակաւին ուսումնասիրուած չէ և այնտեղ էլ կարելի է յուսել, որ բեռնագրեր գտնուին:

Գալով մնացեալ 19 երկիրներին, որոնց միաւորիչ կենդրոնն էր *Riduani* (Ռիդուանի), պէտք է որոնել զոցա Երասխի հովտում և լեռնային անցքերում, որոնք տանում են Երասխից զէպ ի Գեօկ-չայ: Յօգուտ այս ենթադրութեան վկայում է այն հանգամանքը, որ զոցա թուամն է և *Erizav* երկիրն, որ մենք թուանացիքը Երեւանին: Մենք զիսենք, որ այս երկրի սահմաններում արդէն եղել է Արգիշտի և կառուցել է Գանըլ-թափայում մի յիշատակարան (բեռնադիր արձանագրութիւն). բայց ոչ նա ինքն, ոչ էլ նորա հայրը չէ վերջացրել զորա նուաճումն. հաւանական է, որ այս երկրումն էին լեռնային անցքերը Երեւանի տափարակի արեւմտից և հարաւ-արեւմտից զէպ ի Գեօկ-չայի աւազանը, որոնց տիրեն վիճակեցաւ Ռուսա առաջինի: Իմ էջմիածնական բարեկամ, գիտնական արեղայ Գալուստ Տէր-Մկրտչեանը իմ խնդիրքով ու-

ղարկեց ինձ իւր դիտողութիւնները Գուանի արձանագրութեան աշխարհագրական անունների մասին: Մեզ մանաւանդ շատ յաջող է երևում *Guriani* երկրի անունն բաղդատութիւնը *Garni* այսինքն՝ այս զետի արդի ձորի հետ, ըստ որում այս ձորը ամենայարմար և կարճ ճանապարհ է Երասխի հովիտից զէպ ի Գեօկ-չայ և հին ժամանակներից նշանաւոր էր Հայոց պատմութեան մէջ, այդ տեղումն էին Հայաստանի երեւելի մայրաքաղաքները Արտաշատ, Դուին, Նոյնաքէս զօրի չէ հիմնադրել *Aidamaniu* երկրի անունն համեմատութիւնը Ալիեան ման զետի անունն հետ, որ Թաթարացն է և՛ յօրինուած է հին Ուրարտական անունից: Պակաս հաւանական են երևում հետեւել համեմատութիւնները՝ *Pirviani* = Ալաբրան, *Meliani* = Մոզդի, *Uşeduni* = Օշական, որ մեզ փոխադրում են Գեօկ-չայից զէպ ի Արագածի լեռնային սիւսեմը: Բայց այն զէպը մն էլ չէ կարելի անպայման հերքել այս երկիրների Գեօկ-չայի աւազանից զուրս գտնուելու հնարաւորութիւնը: Մենք զմտաբանում ենք բմբռնելու, թէ ինչպէս այս փոքր և բնակչութեան անյարմար տարածութեան վրայ, ինչպէս Գեօկ-չայն է՝ իւր լեռներով ու ձորերով, կարող էին զետեղուիլ այսքան բազմաթիւ անկախ պետութիւններ, որոնց իւրաքանչիւրն ունէր անկախ կառավարիչներ թագաւորի անուամբ. ուստի տրամադիր ենք ենթադրելու, որ արձանագրութեանն աշխարհագրական հորիզոնը աւելի լայն էր, քան թէ Գեօկ-չայն է իւր լեռներով: Երասխի հովիտը հարաւարեւելեան ուղղութեամբ զէպ ի Նախիջևանը կարող էր մեծ ասպարէզ ներկայացնել աշխարհակալութեան համար, այսպէս և ընդարձակ Արագած չէր կարող նուաճուած լինել մի թագաւորի օրերում և Արդիշտի զործը այստեղ էլ, ինչպէս Գեօկ-չայում կարող էր շարունակել ու վերջացնել նորա թոռն Ռուսա առաջինը: Եթէ մեր ընթերցանութիւնը *Riduani* անունն ճիշդ է, շատ հաւանական է նորա յարընչութիւնը *Eriduani* երկրի անունն հետ, որ Երասխի հովտումն էր և կենդրոնն Լուհիւնինի (Գաշ-

պուտուն) էր: Արդեօք *Riduan*-ն փոփոխուած ձևն չէր *Eriduakhi* կամ *Eriduahini*, ըստ որում մասնինն չի նշանակում է սեպականութիւն, պատկանելն (որդի). իսկ ք կարող էր մի կերպ զեղչիլ: Յամե, նայն գէպս *Riduan* երկրորդ պէտք է որ, նեղ Գեօկ-չայից դուրս, որ Միննեաց աշխարհումն էր, այլ շուտով Երասիի հովտում: ուստի աշխարհագրական տեսակետից *Riduan*-ի համեմատութիւնը *Eriduahini*-ի հետ շատ հաւանական է թուում մեզ:

Գիտելով վանի թագաւորների աշխարհակալութիւնները Սևանայ լճի փոքրում, մենք տեսնում ենք, որ այդ աշխարհակալութիւնները կատարվեցան Երասիի ալ և ձախ ափերի հովտի նուաճումից յետոյ՝ Երեանի տափարակում: Բաց ի Դաշպուտանի մօտ եղած Լուհիտինի քաղաքից, Արմարում-Արդիշտիհինիւց, որոնք կենդանիներ էին Մենուայի և Արդիշտիի օրերում, Գեօկ-չայում Ռուսա առաջին ժամանակ մենք գրտնում ենք նոր կենդանի, որ կոչեցինք Ռուսահինի:

Այստեղ դարձեալ մենք չենք կարող լրութեամբ անցնել Հայոց աւանդական աշխարհակալութեանց ընթացքը, որ նկարագրուած է Մ. Խորենացւոյ առաջին գրքի ԺԲ գլխում, այլ պիտի համեմատենք այն Ուրարտեան աշխարհակալութեանց ճշմարիտ ընթացքի հետ: Մենք արդէն ցոյց տուինք ԱՐԱԳԱՆ, գլխում թէ ռբափ Մ. Խորենացւոյ աւանդութիւնը Արմարի, Արագածի, Երասիի և Յուլիերտի մասին հաստատուն հիմք ունի այն մութ յշտակութիւնների մէջ, որոնք վերաբերում են այս վայրերի պատմութեան Ուրարտեան ժամանակաշրջանին: Բայց աւանդութիւնը՝ Երեանի տափարակի նուազումն և նորա կենդանում Արմարի շինութիւնը պատմելուց յետոյ, փոխադրում է մեզ ուղղակի Գեօկ-չայի ափերը: Դա պատահեցաւ Արմարի շինող Արմայիսի թոռն Գեղամի ժամանակ: «Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զՀարմայ յԱրմաիւր: Ե Թողեալ զՀարմայ յԱրմաիւր՝ հանդերձ որովք բնակէրն, և ինքն գնաց զմիւս լերամբն արեւելեան հիւսիսոյ, յեզր ծո-

վակի միոյ: Շինէ զեզրն ծովակին, և թողու անդ բնակիչս. և յիւր անուն և սա զշեանն անուանէ Գեղ, և զՀնսն՝ Գեղաքունի, որով կոչի և ծովն»: Արձանագրութիւններից մենք գիտենք, որ արդարեւ Արդիշտի Արմարից (Արդիշտիհինի) գնաց գէպի հիւսիս-արեւելք Գեօկ-չայի մօտ և տեղից այնտեղ երկրին *Kiehluni* (= Գեղաքունի), ապա, նորա յաջորդները Սարգուրի Բ և Ռուսա Ա նուաճեցին այս լճի բոլոր ափերը: Գեղամի որդի Սիսակի անուամբ բոլոր տեղերը լճի մօտ կոչուեցան Միննե: Գեօկ-չայի երկու բեռնագիր արձանագրութիւնների մէջ Օրդակու և Գուլանը-Գուանը գիտեցում մենք գտնում ենք *Suini* աւանդ, որ նշանակում է լիճ, աւազան: Այդ անունը չէր կարող արդեօք Գեօկ-չայի և բոլոր նահանգի յատուկ անունը դառնալ, նահանգի, որ Գեօկ-չայի աւազանումն էր դանդաղում:

Բաղդաստելով այս ամենը վեր յիշածների հետ, մենք զարձեալ մատնացոյց ենք լինում մեր նկատած այն իրողութեան վերայ, թէ Հայոց աւանդութիւնը՝ Հայերի ձեռքով Երասիի հովտի նուաճելու մասին, արձագանք է Ուրարտեան աշխարհակալութեանց: Այդ աւանդական աշխարհակալութեանց ընթացքը միանգամայն համապատասխանում է Մենուայի, Արդիշտիի, Սարգուրի Բ և Ռուսա առաջին իրօք կատարած աշխարհակալութեանց կարգին:

Գուլանը-Գուանի արձանագրութիւնը [N. XVIII.

1. Խաղիթացւոյ ողորմածաց, . . . Ռուսա,
2. Որդի Սարգուրիի ես, երբ այս երկրը
3. մի վարչութեան (°) եւ
Թարկվեցաւ,
4. երկիրն Ագահունի, երկիրն Ուլիդա,
երկիրն Կուսիւրահի,
5. երկիրն Արքուրինի 4 Թագաւորներ աշխարհին, որ կոչուում է «Եւային»,
6. երկիրն Ուրմանի, երկիրն Շանաւ,
առաւելին, երկիրն Տէրիւիշարին,
7. երկիրն Ռիշուաինի, երկիրն Չուաինի,
երկիրն Աիւուանի, երկիրն Ամանին,

8. երկիրն Իրկիմախնի, երկիրն Էլախնի,
երկիրն Լոխլուուխնի,
9. երկիրն Աիգամախնի, երկիրն Գու-
րիախնի, երկիրն Ալգրիանի
10. երկիրն Պիրուախնի, երկիրն Մեչախնի,
երկիրն Ուշեղուխնի
11. երկիրն Ատազախնի, երկիրն Էրիախնի,
երկիրն Ազամերուխնի,
12. 19 թագաւորներ աշխարհին, որ կոչ-
ւում է Ռիգուանի, հեռաւոր երկրի,
13. հարկատու ընդ ամենը 23 թագաւոր
միասին եւս առի.
14. այր (և) կին Ռիայնա երկիրը եւս զուրս
հանեցի այս տարի
15. . . եւս նորոգեցի Ռուսա պալատներ
16. . . . երկիրներ
17. չաստուածին Տէկըա այս տաճարը կոր-
ծանուած եւս նորոգեցի
18. չաստուած Տէկըա
19. (բոլոր տողը շնչուած է)

Շարայարեղի

Խ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ



ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԿԻՐՈՅ ԾԱՐԳԸ

Ա Ռ Ն Ա Խ Ն Ի Հ Ա Ս Ս

(ՀՍՏ ԳՐ. Ս. ՎԵՐԵՐԻ)

(տես յէջ 314)

ՍՐԱՌՑՆ Պօղոսի թղթոց եւս զործա-
ծութիւնն կը տեսնուի յաճախ. զօր. Հաւովմ.
Թ. 22¹, — Ա. Կորնթ Թ. Ը, 27², — Բ. Կորնթ
Թ. 2. 15³. Ղազար փարպեցի⁴ ի մէջ կը
բերէ առ Գաղատ. թուղթը, եւս եւս առ Ե-
փես. Ե. 4, 5⁵, — Ա. Թեաաղ. Դ. 16⁶, եւ

Բ. Թես. Բ. 8¹, — Փիլիպ. Բ. 8², Իսկ յԵզնը-
կայ կը յիշուին Ա. Տիմ. Բ. 4³, եւ Բ. Տիմ.
Բ. 21⁴, եւս փրկին եղծիչ աղանդոցն
ոչ ուղղակի կը յիշատակէ զթուղթն առ Տի-
տոս եւ ոչ այլ զայն կը զործածէ, թէպէտ եւ
կը կշտամբէ զՄարկոսն⁵ որ առաքելական
թղթերը կը մերժէր. — և յիշուի ըստ Տեր-
տուղանոն ունչ հերետիկոսն չէր ընդհանր
զթուղթն առ Տիտոս. Հեռաւորաբ, վասն զի
թուի թէ Եզնիկ Պօղոսի թղթերը առ Հա-
տարակ յայտնապէս կանոնական համարուած
ներսն մէջ կը գտայ, այս թուղթն եւս կա-
նոնական կը համարի. Բրովհեստ կը զործա-
ծէ նա եւս զթուղթն առ Երբ. ԺԱ.
5⁶. Եւ Եզնիչ, ի մեկնութեան Գառաւորաց
ԺԱ, կ'ակարբէ զթուղթն առ Երբ. ԺԱ.
32, իրեւ հեղինակ նոյն թղթոյն անունեւ-
լով զՊօղոս. — զործեալ եւս Կորոս. թղթ-
թոյն կանոնական յարգը առ Հայս⁷ կը հա-
տատէ նոյն թղթոյն Գ. 22-24 համարները
ի վկայութիւն առնելով Արդ իրաց այս հան-
գամանաց մէջ, թէ եւս փրկեմն թուղթն
չի յիշատակուի կամ ի վկայութիւն չի բե-
րուի, այսու ամենայնիւ անխախտ կը մնայ
այն ենթադրութիւնն թէ Հայկական կանոնն
կը պարտաւորէր ամբողջ իրեւ պօղոսեան ա-
ւանդեալ 14 թղթերը. Այնքան հակառակու-
թիւն կրող առ Երբայեցիս թղթոյն կանո-
նական յարգն յառաջագոյն կարծել կու տայ
թէ նոր կտակարանի միւս երկրորդականն
գրքերն եւս, որք այսպէս կուրծեր են երկար
ժամանակ անոնց առաքելական ծագման մա-
սին տարակուսուելուն համար, ի սկզբանէ
Հայկական եկեղեցւոյ մէջ կանոնական յարգ
ունեցեր են. Եւ յիշուի Եզնիկ⁸ կ'անար-
կէ Յակոբ. Բ. 19 անժխտելի կերպով. —
Ղազար փարպեցի⁹ բառ առ բառ ի մէջ կը
բերէ Յակոբ. Գ. 1 համարը. — և վերջնոյս
հետ Յովհան Մանդակունի¹⁰ տոյն թղթոյն
առաքելական ծագման կը վկայէ եւս զայն
կ'ապացուցանէ Ե. 7 եւ Ե. 20 համարներէն.
Նմանապէս կրնանք յիշել եւս թէ նորա ճա-
սից մէջ կը գտնուին վկայութիւնք յԱ.

1. — Եզնիկ. Բ. 17, էջ 167:
2. — Դ. 12, էջ 284:
3. — Բ. 12, էջ 151:
4. — Թուղթ. էջ 675:
5. — էջ 654:
6. — Պատմ. էջ 98:

1. — Պատմ. էջ 111:
2. — Եզնիկ Դ. 17, էջ 278:
3. — Բ. 17, էջ 167:
4. — Բ. 17, էջ 168:
5. Դ. 3, էջ 253 եւ Դ. 16, էջ 297:
6. — Ա. 25, էջ 104:
7. — էջ 11:
8. — Բ. 12, էջ 150:
9. Թուղթ. էջ 661:
10. Զառք. էջ 120, — էջ 19: